3817

281·6
4-21

1908

2010

67

281-6
4-21

ԿԱՆՈՆՔ

Ի ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆ ՅԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս անձանց մասնակցողաց ընտրութեան Ծայրագոյն Պատրիարքի եւ Կաթուղիկոսի:

Յող. 1.

Ըստ 13–րդ յօդուածոյ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ օրէնսդրութեան ի 11–ն Մարտի 1836 ամի՝ յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան, ընտրութիւն Ծայրագոյն Պատրիարքի և Կաթուղիկոսի լինի ընդ ձեռն պատգամաւորաց առաքելոց յիւրաքանչիւր վիճակաց երկու երկու, հոգեւորական և աշխարհական: Եկեղեցական պատգամաւորն պարտի լինել կամ ինքն Թնմակալ Առաջնորդն կամ անձն այն՝ զոր նշանակեսցէ նա յեկեղեցականաց, իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յամենայն պատուաւորաց Հայոց, ի Մելիքաց,

ԲԲ 2001

29295-42

ի հարիւրապետաց և յայլոց յարգելի աշխարհական անդամոց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ որ ունին իրաւունս ընտրելոյ ըստ վաղեմի սովորութեան այսր եկեղեցւոյ։

Յող. 2.

Այսոքիկ ընտրեալ պատգամաւորք եթէ ոչ կարասցեն գալ անձամբ ի վանս Էջմիածնի մինչ ցնախորոշեալ ժամանակն ընտրութեան Պատրիարքի, ունին իրաւունս գրաւոր յայտնել զկարծիս իւրեանց՝ հասուցանելով զայն ի Սիւնհոդոսն Էջմիածնի։

Յող. 3.

Բաց ի պատգամաւորաց մասնակցին ընտրութեան Պատրիարքի ամենայն անդամք Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին Էջմիածնի և եօթն եպիսկոպոսունք յերիցագունից՝ եղելոց ի ժամանակին յայնմիկ Էջմիածին, իսկ ի դէպս պակասութեան եպիսկոպոսաց թիւն այն լրասցի յաւագագոյն վարդապետաց տեղւոյն։

Յող. 4.

Պրոկուրօրն Սիւնհոդոսի Էջմիածնի պարտ է ներկայ լինել ի ժամ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարքին Էջմիածնի յաղագս հսկելոյ կարգին և բացատրելոյ զկանոնս ընտրութեան ի

12229-58
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՊ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

դէպս ծագելոյ որ և իցէ երկբայութեանց ըստ այսմ առարկայի (Օրէնսդրութիւն յաղագս կառավարութեան Հայաստանեայց եկեղեցւոյ յօդուած 46)։

Ծանօթութիւն։ Եթէ երկբայութիւնքն այնոքիկ առնուցուն զդարձուածս անվայելս կարգաց կարգաց և բարեկարգութեան, զոր պարտ է պահել ի ժամ ընտրութեան, յայնժամ իրաւունք են աւագագոյն Անդամոց (Կատարողի պաշտաման Կաթուղիկոսի) թողուլ զժողովն այլում աւուր, ի ձեռս առնլով զհնարս վասն ածելոյ ի համաձայնութիւն զծագեալ երկբայութիւնսն։

Յող. 5.

Ընտրութիւնն կատարի յէջմիածին ի Մայր Տաճարին Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ խստագոյն պահպանութեամբ արարողութեանց կարգելոց ի Հայաստանեայց եկեղեցւոյն՝ որք ամփոփին ի յառաջիկայս։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս նախընթաց կանոնաց՝ որք պարտին կատարիլ նախ քան զընտրութիւնն։

Յող. 6.

Ի գալ հասանել մէն մի թեմական առաջնորդի, Տեղական Ատենապետի Լուսաւորչական

Հայոց Սիւնհոդոսին՝ Աւագագոյն Եպիսկոպոսն Տաճարին Էջմիածնի՝ առաքէ ընդ առաջ նորա զեպիսկոպոս մի և զերկուս վարդապետս, որք յետ քաղաքավար ողջունին առաջնորդեն նմա յորոշեալ օթևանն: Իսկ աշխարհական պատգամաւորացն ընդ առաջ ելանէ ի Ղազարապատէն կարգեալ հիւրընկալ եկեղեցականն, որ և ազուցանէ զնոսա ի սենեակս Ղազարապատին: Հիւրընկալն արձանագրէ յառանձին մատենի զանուանս ամենայն պատգամաւորաց եկելոց, նշանակելով զօր ժամանման իւրաքանչիւր ուրուք:

Յօդ. 7.

Յետ ժամանելոյ ամենայն պատգամաւորաց՝ հոգևորականաց և աշխարհականաց, յետ ընդունելոյ զգրաւոր կարծիս առաքեալս ի Սիւնհոդոսն և յետ առաջադրութեան Տեառն Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու վասն բացման ժողովոյն, նոյն իսկ հոգևորական անձն առաջի առնէ ի Սիւնհոդոսն զցուցակ եկեալ պատգամաւորացն, որ ի նմին ժամանակի որոշէ զօր ընտրութեան Պատրիարք-Կաթուղիկոսի և կազմեալ զօրագիր ըստ այսմ առարկայի՝ զքաղուածն յայնմանէ մատուցանէ Տեղակալին Ատենապետի Սիւնհոդոսի վասն կախեալն զնմանէ տնօրէնութեանց ի կատարել զսրբազան պաշտամունս ըստ հետագային:

Յօդ. 8.

Վասն գրագրութեանց ժողովոյն Լուսաւորչական Սիւնհոդոսն Էջմիածնի կարդէ զԱտենադպիրն իւր և զերկուս օգնականս նորա:

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս մանրամասնութեանց ընտրութեան չորից երիցագոյն թեկնածուաց եւ վասն քուէարկելոյ ի նոցունց զերկուս թեկնածուս յաստիճան Ծայրագոյն Պատրիարքի:

Յօդ. 9.

Յառաջ քան զընտրելն երիցագոյն թեկնածուս՝ ի տաճարին Էջմիածնի առաջի սեղանոյն Իջման Որդւոյն Միածնի դնի գրասեղան, ծածկեալ կարմիր մահուտիւ վասն ներկայ պատգամաւորաց և հոգևորականացն ի միաբանութենէ Վանիցն Էջմիածնի, և այլ առանձին սեղան վասն Պրոկուրորի Սիւնհոդոսին Էջմիածնի:

Յօդ. 10.

Ի վերայ սեղանոյն այնմիկ դնին խաչ և Աւետարան, և երկուստեք աշտանակք երկու արծաթի՝ լուցեալ ճրագօք: Բայց յայսմանէ. 1,

Տպեալ օրէնսդրութիւն յաղագս Կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան և Կանոնք վասն ընտրութեան Ծայրագոյն Կաթուղիկոսի. 2, Հինգ ընտրողական թերթք՝ չորքն ըստ ձևոյն № 1, և մին՝ ըստ ձևոյն № 2՝ որ ընդ սմին. 3, Անուանական ցուցակ բոլոր աշխարհական պատգամաւորաց՝ որ ունին իրաւունս ընտրելոյ զԾայրագոյն Կաթուղիկոսն ըստ վաղեմի սովորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ (յօդ. 37). 4, Անուանական ցուցակ սահմանեալ թուոյ հոգևորականաց ի միաբանութենէ Վանիցն Էջմիածնի և պատգամաւորաց եկելոց յընտրութիւնն. 5, Գրաւոր կարծիքք պատգամաւորաց՝ որք ո՛չ կարեն անձամբ ներկայ լինել յընտրութեանն. 6, Անուանական ցուցակ պատգամաւորաց՝ որք թէպէտ և պարտ էին ներկայ լինել ի ժողովին, բայց ո՛չ ժամանեցին անդր և ո՛չ առաքեցին ի Սիւնհոդոսն զկարծիս իւրեանց, և 7, Առաջադրութիւն Ց. Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու առ ի բանալ զժողովն:

ԴԷՊՈՒՏ Դ.

Յաղագս կարգի պարապմանց ժողովոյն:

Յօդ. 11.

Յորոշեալ աւուրն ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին պատգամաւորք ժո-

ղովին յիններորդում ժամու առաւօտեան ի Կաթուղիկոսական վեհարանն, ուրանօր ընկալնու զնոսա Աւագագոյն սրբազանն տաճարին Էջմիածնի և միւս անդամք Սիւնհոդոսին: Յետ այսորիկ Աւագագոյն սրբազանն հրաւիրէ զնոսա յեկեղեցի յունկնդրութիւն Աստուածային պատարագի և զգոհացողական մաղթանաց վասն առողջութեան և երկարութեան կենաց ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և բոլոր ՕԳՈՍՏԱՓԱՌ տանն, և յաղագս երդմնեցուցանելոյ զաշխարհական պատգամաւորս առ ի պահպանութիւն կարգաց և անկողմնակալութեան յառաջիկայ գործն:

Ծանօթութիւն. Հոգևորականքն ո՛չ ածին յերդումն, այնու ենթադրութեամբ՝ զի պարտին նոքա ըստ պարտուց և ըստ սրբազան աստիճանի իւրեանց պահպանել զայնոսիկ կանոն:

Յօդ. 12.

Մուտն ի տաճարն կատարի այսպէս. յառաջոյ ընթանայ կատարողն պաշտման Պատրիարք Կաթուղիկոսին (Երիցագոյն Անդամ Սիւնհոդոսին), ապա պատգամաւորքն Պատրիարքաց Երուսաղէմի, Սսոյ, Աղթամարայ և Կ. Պոլսոյ, զհետ նոցա երթան կարգաւ զոյգ զոյգ յաջմէ կողմանէ՝ Անդամք Սիւնհոդոսին Էջմիածնի և եօթն երիցագոյն եպիսկոպոսունք տեղւոյն՝ ու-

ղեկցեալ ի Պրոկուրորէ Սիւնհոդոսին, իսկ յահեկէ՝ թեմական եպիսկոպոսունք կամ պատգամաւորք նոցա կարգաւ նոյնպէս զոյգ զոյգ ըստ աւագութեան աստիճանի ձեռնադրութեան նոցա, և ապա զհետ նոցա երթան աշխարհական պատգամաւորք նովին իսկ կարգաւ ըստ աւագութեան քաղաքացն, և վերջապէս Ատենադպիրն Սիւնհոդոսին Էջմիածնի փակէ զընթացսն:

Ծանօթութիւն. Ի դէպս անյաջող եղանակի ո՛չ կատարի հանդիսաւոր մուտն այս, և պատգամաւորք ըստ հրաւիրանաց Աւագագոյն եպիսկոպոսի և Պրոկուրորի Սիւնհոդոսին Էջմիածնի գնան ի Կաթուղիկոսարանէ յեկեղեցի առանց պահպանելոյ զվերոյգրեալ արարողութիւնն:

Յօդ. 13.

Զպատարագն սուրբ և զդոհացողական մաղթանս մատուցանէ հանդիսիւ աւագագոյն եպիսկոպոս տաճարին Էջմիածնի, իսկ զկնի աւարտման պատարագին և գոհացողական մաղթանացն վան երկարութեան կենաց ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և համայն ՕԳՈՍՏԱՓԱՌՏԱՆՆ ՆՈՐԱ, Աւագագոյն եպիսկոպոսն յերդումն ածէ զամենայն առաջիկայ աշխարհական պատգամաւորս ըստ սահմանեալ ձևոյն (ձև 3) երդուեալքն ամենեքեան ստորագրեն զանուանս իւրեանց ի վերայ թղթոյն երդման:

Յօդ. 14.

Ի միւսում աւուր կատարման այսր ծիսի ամենայն ներկայ եղեալքն և որք ունին զիրաւունս ընտրութեան Պատրիարք Կաթուղիկոսի զտեղիս կալցեն շուրջ զգրասեղանով, որ եղեալ կայ առաջի Սեղանոյ Իջման Որդւոյն Միածնի (§ 9), ի միջավայրին Կատարող պաշտման Պատրիարք Կաթուղիկոսի, յաջմէ կողմանէ նորա վերոյիշեալ պատգամաւորք չորից Պատրիարքաց և բոլոր հոգևորականք, որ ունին իրաւունս ընտրելոյ զՊատրիարք Կաթուղիկոսն ըստ աւագութեան ձեռնադրութեան իւրեանց, իսկ ի ձախմէ կողմանէ աշխարհական պատգամաւորք ըստ աւագութեան կոչման իւրաքանչիւրոցն:

Ծանօթութիւն. Հոգևորական անձինք՝ որք ունին իրաւունս բազմել ի տաճարին ըստ Ծիսի Աստուածպաշտութեան պահպանեն զայսոսիկ իրաւունս և յայսմ նուագի, իսկ այլքն ամենեքեան ընտրեն յոտին կացեալ:

Յօդ. 15.

Նախ քան զամենայն Երիցագոյնն ի բարձրաստիճան հոգևորականաց գործակցութեամբ երկուց աւագ սարկաւագաց ընթեռնու զպատշաճաւոր սաղմոս և զաղօթս ըստ Ծիսի Հայաս-

տանեայց եկեղեցւոյ, հուսկ ապա նոյն ինքն բարձրաստիճան հոգևորականն ասէ քարոզ ըստ պատշաճի, յորում յանդիման կացուցանելով ժողովոյն զվսեմութիւն գործոյն՝ որոյ վասն գումարեալ են, զպէտս եկեղեցւոյ և զայն բարբրութիւն՝ որում ակն ունի եկեղեցին յընտրութենէ արժանաւորագոյն Գլխոյ իւրոյ, հրաւիրէ զժողովն, որպէս զի ի բաց մերժելով զամենայն վնասակար երեսպաշտութիւն, զուն գործեսցեն զի ընտրեալ Գլուխն Հայաստանեայց եկեղեցւոյ կարասցէ պահել զամենայն արժանաւորութիւնս կցորդս ընդ նորին վեհ աստիճանի, այնու ճշմարիտ և իրաւացի մտօք, զի զընտրութենէ արժանաւորագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց կախեալ կայ ամենայն բարբրութիւն սոյն եկեղեցւոյ և Կաթուղիկէ Աթոռոյն ամենայն Հայոց Սրբոյ Էջմիածնի: Հուսկ ուրեմն Պրօկուրօր Սիւնհոդոսին Էջմիածնի ընթեռնու զառաջադրութիւն Տեառն Կառավարչապետին քաղաքական մասին Կովկասու վասն բացման ժողովոյն, և ժողովն սկիզբն դնէ ընտրութեան աւագագոյն թեկնածուաց:

Յօդ. 16.

Իւրաքանչիւր ոք ի ժողովականացն տայ զկարծիս իւր վասն ընտրութեան աւագագոյն թեկնածուաց ազատօրէն, ըստ ուղիղ հասկացողութեան իւրում և ըստ մաքուր խղճի մտաց

առանց իրիք երկիւղի, և ո՛չ հայելով բնաւին յոչինչ օտարոտի առաջարկութիւն կամ ի մասնաւոր նամակագրութիւն, թէև իցէ այն ի պատուաւորագոյն անձանց յԱզգէն Հայոց. ամենայն ոք վարի այնպէս, զի կարասցէ տալ պատասխանի յամենայնի առաջի Տեառն Աստուծոյ: Ուստի և իւրաքանչիւր ոք ի բաց մերժելով զամենայն յամառութիւն կարծեաց և անձանց՝ չան դիցէ տեսանել ի կարծիս ընդհանրութեանն զհաստատուն հիմն ճշմարտութեան:

Յօդ. 17.

Իւրաքանչիւր անդամ ժողովոյն զկարծիս իւր պարտ է արտայայտել համառօտ, պարզ, ո՛չ հեռանալով առհասարակ յիսկական առարկայէն, յանդիման առնել նախ՝ զարժանաւորութիւն բարձրաստիճան հոգևորականի առաջարկելոյն յինքենէ, ապա զապացուցութիւնս և վերջապէս զակնկալեալ ի նմանէ օգուտն վասն եկեղեցւոյ:

Յօդ. 18.

Ի ժամ յայտնելոյ զկարծիս սկսանելով ի կրտսերագունէն և կարգաւ հասանելով առ երիցագոյնն, չէ՛ պարտ ուժեք ընդհատել զբանս այլոց, կամ խառնիլ ի խօսս նորա մինչև է աւարտեալ նորա զիւրն առաջարկութիւն: Յայտնեալ կարծիքք միանգամայն զրին ի Պրօկուրօրէն, և

յետ գրութեանն ընթերցեալ լինին բարձրաձայն, և վաւերացուցանին ստորագրութեամբ անդամոյն, որ տուեալ է զկարծիս:

Յող. 19.

Պատգամաւորն եկեալ յԷջմիածին, որ ի պատճառս հիւանդութեան կամ այլոց անակնուելի դիպուածոց ոչ կարէ ներկայ լինել ի ժողովին, պարտ է հաստուցանել նմին զիւրն կարծիս, ոչ թողլով զայն առ վաղիւն: Զնոյն պարտին կատարել և Անդամք Սիւնհոդոսին Էջմիածնի, եթէ ոք ի նոցանէ ոչ մարթասցի ներկայ լինել ի ժողովին ըստ անակնուելի հանգամանաց: Ազատ են ի տալոյ զգրաւոր կարծիս իւրեանց այնոքիկ և եթ պատգամաւորք, որք ի պատճառս ծանր հիւանդութեան իցեն իսպառ յանհնարաւորութեան տալ զոր և իցէ կարծիս:

Յող. 20.

Զայնք ամենայն անդամոց ժողովոյս այսորիկ հաւասար են միմեանց:

Յող. 21.

Զկնի հաւաքման ձայնից բոլոր ժողովոյն և հասու լինելոյ գրաւոր բացատրութեանց հասելոց ի Սիւնհոդոսն ըստ 2 յող. չորեքին աւագդոյն բարձրաստիճան Հոգևորականք ըստ բազ-

մութեան ձայնից տուելոց ի նպաստ նոցա՝ ճանաչին ունողք իրաւանց ընտրեալ լինելոյ ի թեկնածու, իսկ ի դէպս հաւասարութեան ձայնից, վիճակն որոշէ թէ ո՛ ոք համարելի է աւագ:

Ծանօթութիւն. Գրաւոր յայտարարութիւնք բացակայ պատգամաւորաց պարտին ընդունիլ ի հաշիւ՝ հաւասար ընդ ձայնից ներկայ եղելոց յօդուտ այնր անձին, որ ի յայտարարութիւնս յայնոսիկ նշանակի յանուանէ:

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս ընտրութեան երկուց թեկնածուաց յաստիճան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի:

Յող. 22.

Յերկրորդում կամ յերրորդում աւուր ի չորից վերոյգրեալ Աւագագոյն թեկնածուաց անտի բոլոր առաջիկայ ժողովականք ընտրեն զերկուս թեկնածուս յաստիճան Ծայրագոյն Պատրիարքի:

Յող. 23.

Ընտրութիւնն կատարի տուչութեամբ ձայնից հետագայ կարգաւ:

Յող. 24:

Զկնի ընթեռնելոյ զպատշաճաւոր աղօթս և արտասանելոյ զհամառօտ բան համաձայն այնմ

որպէս յիշատակեալ է ի վերոյ ի § 15, վերաձայնի անուն առաջնոյն ի չորից աւագագոյն թեկնածուաց:

Յօդ. 25.

Ի կարգալն զանուն թեկնածուին իւրաքանչիւր ոք ի ներկայ եղելոց, որոց են իրաւունք ընտրութեան յայտարարէ ի ձայն՝ թէ արժանի՞ համարի արդեօք զառաջարկեալ անձն աստիճանի Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի: Արժանի համարելն արտասանի միով բանիւ ընտրեմ կամ ոչ ընտրեմ: Տուչութիւն ձայնից սկսանի ի կրտսերագոյն յանդամոյն աշխարհական պատգամաւորաց, և այսու եղանակաւ ելանէ ի վեր ըստ կարգին ըստ հիմանն՝ որպէս ասացեալ է ի վերոյ § 18:

Ծանօթութիւն. Յայտարարութիւնք բացակայ պատգամաւորաց ոչ ընկալեալ լինին ի հաշիւ ձայնից, որովհետև ըստ զօրութեան § 17 ՐԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ ի 1836 ամի Օրէնսդրութեան յաղագս Կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան, ընտրութիւնն պարտի լինել միմիայն ի ձեռն ներկայ եղեալ պատգամաւորաց:

Յօդ. 26.

Թեկնածուն՝ զոր ընտրեն, ոչ տայ զձայն:

Յօդ. 27.

Զայն իւրաքանչիւրոց՝ զկնի յայտարարելոյն ի գիր արձանացուցանի ի Պրօկուրօրէն Սինոդի ի ցուցակի ընտրութեան, և վաւերացուցանի իսկական ստորագրութեամբ ընտրողի: Յորժամ բոլոր առաջիկայ անդամք տացեն արդէն զձայնս, յայնժամ ցուցակն մատուցանի Նախագահի ժողովոյն, որ համարեալ զձայնս ընտրողականս և ոչ ընտրողականս առանձին առանձին նշանակէ զթիւ այնոցիկ ի պատշաճաւոր խորանս ընտրողական ցուցակի հանդէպ անուան քուէարկեալ թեկնածուի:

Յօդ. 28.

Յետ այսորիկ ծանուցանի ներկայ ժողովոյն թիւ ընտրող և ոչ ընտրող ձայնից, և սկսանի ընտրութիւն միւս թեկնածուի նովին իսկ կարգաւ, և նոյնպէս մնացեալ երկուց թեկնածուաց:

Յօդ. 29.

Յորժամ քուէարկի աւագագոյն Հոգևորական Անդամ ժողովոյն՝ որ նախագահէ ի նմին,

յայնժամ աւագագոյնն զկնի նորա յառաջիկայ հոգևորականաց համարէ զձայնս, անցուցանէ զայնոսիկ ի ցուցակ ևն.», որպէս ցուցեալ է ի § 27:

Յօդ. 30.

Զկնի աւարտման արարողութեան ընտրութեանն՝ ի ձայն ընթերցեալ լինի ցուցակն չորից ընտրեալ թեկնածուաց, յորոց երկուքն՝ ունողք զմեծագոյն թիւ ձայնից, համարեալ լինին թեկնածու յաստիճան Ծայրագոյն Պատրիարքի:

Յօդ. 31.

Ցընտրողական ցուցակի չորից աւագագոյն թեկնածուաց նշանակի յանդիման երկուցն ի նոցանէ՝ թէ նոքա ըստ առաւելութեան ձայնիցն՝ ի նպաստ նոցին տուելոց, արժանացեալք են թեկնածութեան ի կոչումն Ծայրագոյն Պատրիարքի: Այս ընտրողական ցուցակ ստորագրի ի բոլոր անդամոց մասնակցելոց ժողովոյն, վաւերացուցանի ի Պրոկուրորէն և առաջարկեալ լինի ում անկ է: Պատճէն յիշեալ ցուցակի ստորագրեալ յանդամոց Սիւնհոդոսին Էջմիածնի վաւերացուցմամբ Ատենադպրի նորին մնայ ի գործս Սիւնհոդոսի:

Յօդ. 32.

Բաց ի ստորագրեալ ցուցակէն պատրաստեալ լինի առանձին օրագիր վասն ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին յերկուս օրինակս՝ որ ստորագրի ի բոլոր ժողովականացն և վաւերացուցանի յԱտենադպրէ Սիւնհոդոսի Էջմիածնի, մին յայնցանէ առաջարկի ուր անկ է, իսկ միւսն մնայ ի գործս Սիւնհոդոսին:

Յօդ. 33.

Ցընթացս բոլոր ժամանակի պարապմանց ժողովոյն ատենակալութիւն լինի ի տունջեան, սկսեալ յիններորդ ժամու առաւօտին մինչ ցերկրորդ ժամն զկնի միջօրէի, իսկ յերեկոյին ո՛չ բանի ատեան:

Յօդ. 34.

Յետ աւարտման ընտրութեան և ստորագրելոյ երկուց օրինակաց ընտրողական ցուցակի և առանձին օրագրոյ վասն ընտրութեան, ժողովն առաքէ զպատգամաւորութիւն յերից ան-

12229-58
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄԱՍՏՈՑԻ ԱՆՎԱՆ

3817

110 ՄՖ

դամոց իւրոց՝ զմի հոգևորական և զերկուս աշխարհականս առ Տ. Կառավարչապետն քաղաքական մասին Կովկասու վասն առնելի ի կողմանէ նորին տնօրէնութեան՝ ըստ 22-րդ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ հաստատեալ ի 26 ապրելի 1883 ամի կարգադրութեան՝ որ վասն կառավարութեան Կովկասեան կողմանց:

Ի տեղի Տեսչի դիւանացան
Կառավարչապետի քաղաքա-
կան մասին Կովկասու
Փոխ-Տեսուչ Բոգդէ

Ի տեղի գործավարի Օսեցկի

1908 թ.
Վաղարշապատ
Տպարան Ս. Էջմիածնի

281.6
4-21

«Ազգային գրադարան»
NL0030869